

## **/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/**

**ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**

- **Գործուղված անձինք**

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյան  
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ՝ Ա. Սաֆյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Միացյալ Արաբական Էմիրություններ/Դուբայ/ 22.10-24.10.2018 թ.

- **Նպատակը**

Դաշնային մրցունակության և վիճակագրության մարմնի (FCSA) և ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի (UNSD) կողմից կազմակերպված ՄԱԿ-ի տվյալների համաշխարհային ֆորում

- **Քննարկված թեմաները**

ՄԱԿ-ի տվյալների համաշխարհային ֆորումի ծրագիրը կազմվել էր վեց հիմնական բնագավառներից, որոնք ընդգրկում էին թեմաների լայն շրջանակ:

Ֆորումի ընթացքում մասնակիցների համար ստեղծվեց փոխադարձ շփման հնարավորություն լիազույժար նիստերում, ընդմիջման համար նախատեսված վայրերում, նորարարության լաբորատորիաներում, գիտելիքների փոխանակման վայրերում, ցուցահանդեսներում և վիրտուալ ֆորումներում:

Ֆորումին քննարկվեցին հետևյալ թեմաները.

- Բացման նստաշրջան՝ Տվյալների հզորության խթանումը կայուն զարգացման համար

### **Թեմատիկ ոլորտ 1. Ներուժի զարգացման նոր մոտեցումներն ավելի լավ տվյալների համար**

- *Լայն տվյալների էկոհամակարգերի աջակցություն երկրներում*

Թեմատիկ ոլորտ 1-ն ընդգրկում էր ներուժի զարգացման նոր մոտեցումներ՝ անդրադառնալու տվյալներ արտադրողների և սպառողների փոփոխվող կարիքներին նոր փոխկախվածությունների և համագործակցության շրջանակների համատեքստում տվյալների էկոհամակարգերի միջև: Նստաշրջանները թեմատիկ ոլորտ 1-ի ներքո կենտրոնացված էին վիճակագրական ներուժի կառուցումը ռազմավարական ազգային ծրագրման մեջ ինտեգրելու, ազգային վիճակագրական գրասենյակներում (ԱՎԳ) և այլ պետական ու ոչ պետական մարմիններում նոր հմտությունները զարգացնելու վրա՝ լիովին օգտագործելու տվյալների նոր աղբյուրների հզորությունը, նոր եղանակների մշակման վրա՝ չափելու արդյունքները և ազդեցությունները, հարավ-հարավ համագործակցության և գործընկերների ուսուցման ուժեղացման, պետական և մասնավոր հատվածների միջև գործընկերությունների ամրապնդման, և դոնորների բազայի ընդլայնման և

Ֆինանսական գործիքների ստեղծման վրա՝ աջակցելու Կայուն Ջարգացման Նպատակների (ԿՁՆ) չափման համար համակարգերին:

Ընտրված նստաշրջանները թեմատիկ ոլորտ 1-ի ներքո ներառում էին հետևյալը՝

- Հարավ-հարավ համագործակցության ուժեղացում՝ օգտագործելու տվյալների նոր աղբյուրների հզորությունը
- Վիճակագրական ներուժի չափումը. Որտեղ ենք մենք և ուր ենք գնում այստեղից
- Տվյալների հետևվում. Ավելի լավ տվյալների համակարգերի կառուցում ավելի լավ առողջության համար
- Ներուժի արդյունավետ կառուցումն ու տեխնիկական օժանդակությունը տվյալների աշխարհում. Ինչպես ասել ոչ և ավելի լավ համակարգել տեխնիկական օժանդակությունը
- Ազդեցության չափումը, ԿՁՆ-ը և օժանդակությունը պաշտոնական վիճակագրությանը - մասնավոր հատվածի դերն ու գործընկերությունները
- Նոր դարաշրջան քաղաքացիական գրանցման և կենսական վիճակագրության համակարգերի համար՝ ինովացիա և փոխակերպում՝ զարգացնելու ներուժը, նվազեցնելու գենդերային անհավասարությունը և բարելավելու ԿՁՆ-ի համար տվյալները
- Մարդասիրական զարգացման բացերի լրացումը կոնֆլիկտային իրավիճակներում
- Ո՞վ է ցանկանում իմանալ. Վիճակագրական ներուժի քաղաքական էկոնոմիկան
- Ներուժի զարգացում՝ համակարգում, հարմոնիզացում և նորարար մոտեցումներ ներուժի կառուցման համար գործընկերոջ և դոնորի տեսանկյունից
- Ազգային տվյալների հարթակներ ԿՁՆ-ի հաշվետվողականության համար, սկզբունքներ, մոտեցումներ և փորձեր

## **Թեմատիկ ոլորտ 2. Ինովացիաները և փոխազդեցությունները տվյալների էկոհամակարգերում**

- *Տվյալների աղբյուրների համալրելում և նպաստավոր միջավայրի ստեղծում տվյալների ոչ ավանդական աղբյուրների ինտեգրման և օգտագործման համար*

Թեմատիկ ոլորտ 2-ն անդրադառնում էր ինովացիաներին և փոխազդեցություններին տարբեր տվյալների համայնքներում՝ ստեղծելով նպաստավոր միջավայր տվյալների նոր և ավանդական աղբյուրների ինտեգրման և օգտագործման համար: Նստաշրջանները թեմատիկ ոլորտ 2-ի ներքո ուսումնասիրեցին, թե ինչպես հաղթահարել ԱՎԳ-ի փոփոխվող դերը, երբ դրանք տվյալների արտադրողներից անցում են կատարում ծառայություն մատուցողներին, զարգացնել համագործակցությունը ԱՎԳ-ի և տվյալների ոչ ավանդական արտադրողների միջև, ինտեգրել աշխարհատարածական տեղեկատվությունն ու վիճակագրությունը և օգտագործել հնարավորություններն ու չափավորել ռիսկերը կապված մեծ տվյալների օգտագործման և տվյալների այլ նոր աղբյուրների հետ: Նստաշրջանները նաև անդրադարձան տվյալների վրա հիմնված ալգորիթմներին՝

բարելավված ծառայության մատուցման համար, մեքենայական ուսուցմանն և կանխատեսող տեխնոլոգիաների կիրառմանը:

Ընտրված նստաշրջանները թեմատիկ ոլորտ 2-ի ներքո ներառում էին հետևյալը՝

- Տվյալների փոխգործունակությունը գործողության մեջ. Տվյալների ինտեգրման հնարավորությունը կայուն զարգացման համար էկոհամակարգերում
- Տվյալների նոր աղբյուրները քաղաքականության գործողության համար. Երազանքներից դեպի իրականություն
- Ամուր ազգային վիճակագրական համակարգերի կառուցում. Բիզնես (և այլ) ռեգիստրի տվյալների օրինակը
- Պիքսելից դեպի բերքը. Ինչպես կարելի է մեղմացնել նախաբերքահավաքային կորուստը աֆրիկյան փոքր գյուղացիական տնտեսությունների համար՝ օգտագործելով փոխազդեցությունները տարբեր տվյալների համայնքներում
- Տվյալների շտկումը գործողության մեջ. Դարձնելով տվյալների համագործակցությունները համակարգային, կայուն և պատասխանատու
- Հնարավորություններ երկրային դիտարկումների համար. Կապելով ջուրը, հողն ու մարդկանց
- Ինովացիոն տեխնոլոգիաները և գործընկերությունները ԿՀՆ-ի 16-ի մշտադիտարկման համար
- ԿՀՆ-ի տվյալների մարտահրավերներն ու հնարավորությունները. Աշխարհատարածական հղում, ենթակառուցվածք և ժողովրդագրական տվյալներ զարգացման համար
- Մեծ տվյալներ կայուն զարգացման համար. Ի՞նչ է պահանջվում հաջորդ մակարդակին անցնելու համար
- Միգրացիայի և զարգացման միջամտությունների համար տվյալների ինովացիայի ներուժի խթանումը. Ներկա իրավիճակը, խոստումներն ու մարտահրավերները
- Բաց ալգորիթմների (OPAL) նախագիծ. Ինչ է ձեռք բերվել Սենեգալում և Կոլումբիայում և ինչպես կարող է դա ընդլայնվել
- Անչափելիի չափումը. Նոր տվյալներ ԿՀՆ-ի մակարդակ III-ի ցուցանիշների ընկալումների համար
- Մեծ տվյալները և գլոբալ գենդերային բացը՝ թվային տեղեկատվության խոստումը և վտանգները
- Տվյալների հեղափոխություն. AI-ը կայուն զարգացման համար
- Երկրային դիտարկումների հավելվածները կայուն զարգացման նպատակների համար. Հնարավորությունները հաջողված մեթոդների ընդլայնման համար
- Բնակչության մշտադիտարկման շարունակականությունը. Ճշգրիտ չափումների ապահովումը, մարդահամարից մինչև զգայունությունը
- Կենսաբազմազանության տվյալների ինտեգրումն ու դեզագրեզացիան ուղղված կայուն զարգացմանը
- Բջջային հեռախոսի ցանցի տվյալների գործարկումը զարգացման և մարդասիրական գործողության համար

- Ինովացիոն լուծումներ՝ հնարավորություն տալով տվյալների վրա հիմնված քաղաքների համար
- Տվյալների մեխանիզմներ. Անցումը չափումից դեպի խնդրի լուծումը
- Ոչ պաշտոնական տվյալներ. Մարտահրավերներն ու հնարավորությունները ԱՎԳ-ի համար
- Դաշնային համակարգ ԿՁՆ-ի համար. Գլոբալ և ազգային բաց ԿՁՆ-ի տվյալների հանգույցներ
- Վերափոխել կամ վերացնել. Տնային տնտեսությունների հետազոտությունները փոփոխվող տվյալների լանդշաֆտում

### **Թեմատիկ ոլորտ 3. Չթողնել ոչ մեկին ետևում**

- *Տվյալների և վիճակագրության ստեղծումն ու օգտագործումը՝ ապահովելու տեսանելիությունն ու ծայրը բոլորի համար*

Թեմատիկ ոլորտ 3-ը կենտրոնացված էր ամենախոցելի տեսանելի դարձնելու վրա՝ տվյալների միջոցով: Նստաշրջանները թեմատիկ ոլորտ 3-ի ներքո կենտրոնացված էին որոշակի խմբերի վերաբերյալ տվյալների հասանելիության, որակի և ընկալման բարելավման վրա, ավանդական և ինովացիոն մոտեցումների միջոցով տվյալների հավաքագրման մեջ որոշակի խոցելի խմբերի ներառմանն առնչվող խնդիրների հասցեագրման վրա, միկրոտվյալները հասանելի դարձնելու մարտահրավերների հասցեագրման շուրջ՝ ապահովելու, որ փոքր խմբերը դուրս չեն մնացել՝ միաժամանակ երաշխավորելով գաղտնիությունը, տվյալների արդյունավետ արտադրման և օգտագործման վրա՝ քաղաքային ու տեղական մակարդակով և վերլուծության աշխարհատարածական միավորները (օրինակ, քաղաքներ, մարդկային բնակավայրեր, քաղաքային/գյուղական տարածքներ) տվյալների արտադրման և տարածման գործընթացներում ինտեգրելու վրա:

- Ընտրված նստաշրջանները թեմատիկ ոլորտ 3-ի ներքո ներառում էին հետևյալը՝
  - Քաղաքացիական գրանցման և թվային նույնականության ինտեգրում. Ի հայտ եկող նոր փորձառություններ
  - Տվյալների հեղափոխությունը Աֆրիկայում. Առաջընթացն ու փորձը տարածաշրջանային, ազգային և ենթաազգային մակարդակով
  - Բացառվածների, ծայրահեղ աղքատների և ամենախոցելիների հաշվառում, ովքեր անտեսվել են, հատկապես գյուղական տարածքներում
  - Չթողնել ոչ մեկին ետևում. Հաշմանդամության դեգադեգացված տվյալների մարտահրավերն ու խոստումը
  - Ինովացիաները տվյալների համակարգերում և բարեկեցության չափումը՝ հարկադիր միգրացիայի և փախստականների հոսքերի համատեքստում
  - Միգրացիայի վիճակագրության բարելավում - դեպի առաջ
  - Դարձնել ներքին տեղաշարժը տեսանելի. վերջնական տվյալների մարտահրավերը՝ չթողնելու ոչ մեկին ետևում
  - Ինչպես կարող են ավելի լավ տվյալները հանգեցնել ավելի բարեկեցիկ կյանքի երեխաների և տեղաշարժվող միգրանտների համար
  - Կանանց նկատմամբ բռնություն. Վիճակագրական ակնարկ
  - Կոռուպցիա և կառավարում. Վիճակագրական ակնարկ

- Չթողնել ոչ մեկին ետևում. Առերեսում անհավասարությունների հետ քաղաքացիական արդարության հասանելիության միջոցով
- Պայքար առավել խոցելիների համար՝ բջջային տվյալներով
- Պահանջվում է մեկ գյուղ ոչ ոքին չանտեսելու համար. Ի հայտ եկող լավագույն փորձառությունները համայնքի վրա հիմնված տվյալների հավաքագրման մեջ
- Չթողնել ոչ մեկին ետևում. տվյալների մարտահրավերներն ու լուծումները՝ հասնելու խոցելի երեխաներին
- Հավաքական գործողություն՝ լրացնելու բացերը Չթողնելու ոչ մեկին ետևում
- Ծերացող գլոբալ բնակչություն. Տվյալների կատարելագործում տարեցների տարիքային խմբերի համար
- Տվյալներ քաղաքականության գործողության համար. Մեծ տվյալների օգտագործումը առաջ մղելու զարգացումը բոլորի համար
- Հաշվի առեք բացը. Ավանդական և ոչ ավանդական մոտեցումները՝ լրացնելու գենդերային տվյալների բացը

#### **Թեմատիկ ոլորտ 4. Հասկանալ աշխարհը տվյալների միջոցով**

- *Դարձնել տվյալները և վիճակագրությունը համապատասխան ու օգտագործելի բոլոր սպառողների համար, բարձրացնել տվյալների և վիճակագրական գրագիտությունը ու տվյալների հաղորդակցումը, լրագրության մեջ տվյալների օգտագործման ամրապնդումը*

Թեմատիկ ոլորտ 4-ը ներառում էր տվյալները և վիճակագրական գրագիտությունը ու տվյալների ու վիճակագրության պատշաճ օգտագործման կարևորությունը՝ հասկանալու մեզ շրջապատող աշխարհը: Նստաշրջաններն ուսումնասիրեցին ինչպես հասցնել տվյալների որակը որոշում կայացնողներին, ինչպես օպտիմալացնել տվյալների հաղորդակցումը, համապատասխանեցնել տվյալների հաղորդակցման ռազմավարությունները սպառողների տարբեր խմբերի համար և ինչպես հզորացնել քաղաքացիներին օգտագործելու տվյալները՝ բարելավելու իրենց սեփական կյանքը: Նստաշրջանների նպատակն էր նաև տրամադրել համատեքստային տեղեկատվություն, որն օգնում է ընկալելի դարձնել այսօրվա տվյալների առատությունը՝ ամրապնդելով տվյալներն ու վիճակագրական գրագիտությունը և խթանելով տվյալների լավագույն փորձառությունները լրագրության մեջ:

- Ընտրված նստաշրջանները թեմատիկ ոլորտ 4-ի ներքո ներառում էին հետևյալը՝
  - Ներգրավման նոր մոտեցումները ԱՎԳ-ի համար՝ բարձրացնելու տվյալների օգտագործումը
  - Զորացնել նրանց, ովքեր չեն խոսում տվյալներով
  - Համապատասխանություն տվյալների հեղափոխության համար. Մեկտեղել տվյալներ արտադրողներին ու սպառողներին
  - Գենդերային տվյալների ազդեցության պատմություններ. Տվյալներից դեպի գործողություն
  - Տվյալները և դիվանագետները. Ներուժի զարգացումը տվյալների տարիքի դիվանագետների և քաղաքականություն մշակողների համար

- Ինովացիոն մշտադիտարկում և գնահատման լուծումներ փոքր և խոցելի պետությունների ԿԶՆ-ի իրականացման համար
- Տվյալների գիտության մշակույթի կառուցումը 21-րդ դարի համար. Մասնավոր հատվածի փորձագիտությունը՝ օգուտ տալու պետական հատվածին
- Տվյալները շրջակա միջավայրի, հանրային առողջության և արդյունաբերական զարգացման քաղաքականության հատվածներում. վերջին ինովացիաներն ու փոխգործելիության հնարավորությունները
- Երկների փորձը վիճակագրական գրագիտության, պաշտոնական վիճակագրության տարածման և հաղորդակցման մեջ. Ինդոնեզիայի, Ռուանդայի և Զամբիայի օրինակները
- Տեղեկացված որոշումների կայացում. Ինչպես են արբանյակային պատկերները և մեքենայական ուսուցումն ազդում զարգացման վրա
- Համապատասխան բոլորի իմաստով «ես, այստեղ, հիմա». տվյալների գրագիտությունը՝ որպես միջոց դեպի սոցիալական ներառման հեղափոխությունը

**Թեմատիկ ոլորտ 5. Տվյալների և վիճակագրության հանդեպ վստահության կառուցումը**

- *Տվյալների սկզբունքների ու կառավարման կիրառումը նոր և գոյություն ունեցող տվյալների աղբյուրներին և բաց տվյալների սկզբունքների ու փորձառությունների իրականացումը*

Տվյալների և վիճակագրության հանդեպ վստահությունն ամենակարևորն է տվյալների արտադրման ու օգտագործման համար: Թեմատիկ ոլորտ 5-ը կենտրոնացել էր տվյալների և վիճակագրության հանդեպ վստահության վրա՝ կիրառելով էթիկայի և տվյալների սկզբունքները, կառավարման և ինովացիոն տեխնոլոգիական լուծումների վրա նոր և գոյություն ունեցող տվյալների աղբյուրների համար և բաց տվյալների սկզբունքների ու փորձառությունների իրականացման վրա: Նստաշրջանները քննարկեցին, թե որքանով կարևոր են տվյալների աղբյուրներն ու լավ կառավարումը տվյալների և վիճակագրության հանդեպ վստահության կառուցման համար, ուսումնասիրեցին ազգային վիճակագրական գրասենյակների համակարգման դերի ուժեղացման եղանակները, քննարկեցին ինչպես գործնականորեն ընդգրկել բաց տվյալների սկզբունքներն և ընդունել տվյալների ստանդարտները տեխնոլոգիայի և սպառողների կարիքների հետ մեկտեղ, կենտրոնացան տվյալների գաղտնիության և անվտանգության վրա փոփոխվող տվյալների էկոհամակարգում, սահմանեցին ոլորտները, որտեղ տվյալների սկզբունքների ու ստանդարտների ընդլայնման կարիք կա, հատկապես տվյալների ոչ ավանդական աղբյուրների առնչությամբ և խթանեցին բազմակողմ շահառուների հետ գործընկերությունները՝ մշակելու ներառական ստանդարտներ ու կառավարման շրջանակներ:

Ընտրված նստաշրջանները Թեմատիկ ոլորտ 5-ի ներքո ներառում էին հետևյալը՝

- Համայնքի տվյալների համագործակցություններ՝ հասնելու ԿԶՆ-ին
- Տվյալների էթիկա. Ինչպես են տվյալները վերաճևավորում հարաբերությունը քաղաքացիների և պետության միջև

- Կառուցել միասին՝ հոգուտ բոլորի. ԵՄ-Միջերկրական տարածաշրջանային համագործակցության օրինակները վիճակագրությունում
- Բազմակողմ շահառուների տվյալների համագործակցությունները Աֆրիկայում կայուն զարգացման համար
- Քաղաքացիների կողմից ստեղծվող տվյալները. Մեթոդաբանությունը, մասշտաբն ու վստահությունը Քաղաքացիների կողմից ստեղծված տվյալների (ՔԿՍ) օգտագործման մեջ՝ չափելու ԿԶՆ-ը
- Տվյալների և վիճակագրության հանդեպ վստահության բարձրացում
- Վստահության կառուցում. Միջազգային հաստատությունների դերը
- Հանրային բարիքի համար վերլուծություն
- Բաց տվյալներ. Բայց ինչպես բացել
- Տվյալների կառավարման նոր մոտեցումները 21-րդ դարում. Երկրների, բազմակողմ կազմակերպությունների և հիմնադրամների տեսակետը

### **Թեմատիկ ոլորտ 6. Որքան հեռու ենք մենք գնացել**

- *Հայացք դեպի Քեյվիթաունի գլոբալ գործողությունների ծրագրի իրականացումը: Անդրադարձ տվյալների հզորության լիարժեք օգտագործման ի հայտ եկող մարտահրավերներին՝ բարելավելու մարդկանց կյանքը*

Թեմատիկ ոլորտ 6-ը գնահատեց, թե որքան ենք մենք առաջադիմել և ձեռնարկել գործնական քայլեր իրականացնելու Քեյվիթաունի գլոբալ գործողությունների ծրագիրը կայուն զարգացման տվյալների համար: Նստաշրջաններն այս թեմատիկ ոլորտի ներքո սահմանեցին նաև ի հայտ եկող մարտահրավերները, որոնց անդրադառնալու անհրաժեշտություն կա գլոբալ տվյալների համայնքի կողմից՝ կենտրոնանալով այնպիսի խնդիրների վրա, ինչպիսիք են զարգացող երկրների կարիքների առաջնահերթությունների սահմանումը խոցելի իրավիճակներում, ռազմավարական ներդրումների մոբիլիզացումը Ազգային վիճակագրական համակարգերի մոդեռնիզացման մեջ, հասցեագրումը վիճակագրական ներուժի կառուցման բոլոր ասպեկտներին և համագործակցության ու համակարգման խթանումը շահառուների խմբերում:

- Ընտրված նստաշրջանները Թեմատիկ ոլորտ 6-ի ներքո ներառում էին հետևյալը՝
  - Ազգային վիճակագրական գրասենյակների դերը Ազգային վիճակագրական համակարգերի ներուժի զարգացման մեջ. Փորձառությունները և քաղված դասերը
  - Արդյո՞ք ազգային վիճակագրական գրասենյակները կգոյատևեն մինչև 2030 թ.. Եթե այո, ապա ինչպիսին կլինեն դրանք
  - Ազգային վիճակագրության մոդեռնիզացում. Որքան առաջ են գնացել դրանք, ովքեր կարիք ունեն
  - Կարողությունների զարգացումը 2030թ. օրակարգի համար. Դեպի իրականացում
  - ՄԱԿ-ի արդյունավետ վիճակագրական համակարգի ձեռքբերում. Ի՞նչ է մեզ անհրաժեշտ
  - Տվյալների գիտնական. Ովքե՞ր են նրանք

- Տվյալների գիտնական. Ովքե՞ր են նրանք
- Տվյալների հեղափոխությունն ազգային մակարդակով. 1000 օր ԿԶՆ-ի ընդունումից ի վեր
- Փակման նստաշրջան՝ Քեյփթաունի գլոբալ գործողությունների ծրագրի իրականացումը Կայուն Զարգացման տվյալների համար՝ դեպի առաջ:

ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի Տնտեսական և սոցիալական հանձնաժողովի ներկայացուցիչը, կարևորելով ԿԶՆ-ի իրականացման Կամավորական ազգային զեկույցների նշանակությունը և դերը, նշեց, որ 2018թ. յոթ երկիր է պատրաստել զեկույց, այդ թվում նաև Հայաստանը (Ավստրալիա, Բուրնի, Լաոսի Ժողովրդավարական Հանրապետություն, Սինգապուր, Շրի Լանկա, Վիետնամ): Միաժամանակ նշվեց, որ 2016թ. հինգ երկիր է պատրաստել զեկույց, իսկ 2017թ.՝ տասը:

Հայաստանի ներկայացուցիչները Ֆորումին մասնակցեցին քննարկումներին՝ ներկայացնելով Հայաստանի վիճակագրության փորձը համապատասխան թեմատիկ ոլորտներում, մասնավորապես, ներուժի ամրապնդման, տվյալների աղբյուրների ինտեգրման և օգտագործման, վարչական ռեգիստրների տվյալների կիրառման, կայուն զարգացման նպատակների համար վիճակագրության մշակման, տարածման և հաղորդակցման, ազգային հաշվետվողականության հարթակի մշակման և գործարկման բնագավառներում:

#### ▪ Արդյունքները

Մասնակցությունը ՄԱԿ-ի տվյալների համաշխարհային ֆորումին հնարավորություն ընձեռեց քննարկելու վիճակագրական համակարգի կարողությունների ամրապնդման և մոդեռնիզացման նոր մոտեցումները, տվյալների նոր աղբյուրների ներուժի բացահայտման ուղիները, տվյալների հավաքագրման նոր մոտեցումները, տվյալների արտադրման ինովացիոն տեխնոլոգիաները, տվյալների հաղորդակցման և արտացոլման նոր գործիքները, տվյալների որակի և փոխանակման ու ինտեգրման համար ստանդարտները, պաշտոնական վիճակագրական համակարգերի և շահառուների միջև համագործակցության ռազմավարությունները, ծանոթանալու վիճակագրական տարբեր ոլորտների վերջին զարգացումներին և լավագույն փորձին, ուսումնասիրելու ինովացիոն եղանակները տվյալների և վիճակագրության կիրառման համար՝ գնահատելու գլոբալ առաջընթացը և տեղեկացնելու փաստերի վրա հիմնված քաղաքական որոշումները կայուն զարգացման համար 2030թ. օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև քննարկելու միջազգային զարգացման նպատակների՝ 2030թ. օրակարգի տվյալների կարիքների բավարարումը և առկա մարտահրավերները, նոր նախաձեռնությունները և լուծումները՝ տրամադրելու ավելի լավ տվյալներ բոլորի համար, վիճակագրական համակարգի զարգացման հեռանկարները և հետագա համագործակցության հնարավորությունները:

▪ **Նշումներ**

Ֆորումին մասնակցում էին 2000-ից ավել ներկայացուցիչներ ավելի քան 150 երկրներից, ներկայացուցիչներ ՄԱԿ-ի համակարգի կազմակերպություններից, միջազգային կազմակերպություններից, ազգային վիճակագրական ծառայություններից, նախարարություններից, մասնավոր հատվածից, քաղաքացիական հասարակությունից, գիտական և ակադեմիական համայնքներից, հետազոտական, հասարակական և այլ կազմակերպություններից: Ֆորումին ընդգրկվել էին 87 նստաշրջաններ, խոսել էին 400 փորձագետներ, քննարկված փաստաթղթերը տեղադրված են կայքում (<https://undataforum.org/>):

Հայաստանի վիճակագրական կոմիտեի ներկայացուցիչը՝ ի դեմս Ա. Սաֆյանի Դանիայի ազգային վիճակագրական ծառայության ներկայացուցչի՝ Սիլյա Էմմելի հետ համատեղ ՄԱԿ-ի տվյալների համաշխարհային առաջին ֆորումին (Հարավաֆրիկյան Հանրապետություն/Քեյփթաուն/15-18.01.2017թ.) ներկայացրել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II» ԵՄ ԹՎինինգ ծրագրի հենքով երկու կառույցների միջև համագործակցության լավագույն և հաջողված փորձը:

Ֆորումի ընթացքում տեղի ունեցան քննարկումներ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ Եվրամիության վիճակագրական գրասենյակի (Եվրոստատ) գլխավոր տնօրենի և Համաշխարհային Բանկի, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության, Դանիայի, Նորվեգիայի, Ֆինլանդիայի, Նիդերլանդների և Իտալիայի ազգային վիճակագրական ծառայությունների, Տվյալների Գործելու Լաբ-ի (Data Act Lab) ներկայացուցիչների հետ:

Այցելության ծախսերը ֆինանսավորվել էին ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի և ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի կողմից:

«Վիճակագրական կոմիտեի նախագահ

Ս. Մնացականյան

«Վիճակագրության պետական խորհրդի անդամ

Ա. Սաֆյան